

ԲԱԺԻՆ 5
ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԸ

Մեթոդաբանական պարզաբանումներ

Երեխաների ազգությունը որոշվել է ծնողների կողմից:

Մայրենի լեզուն համարվել է այն լեզուն, որը նշել է հարցվողը:

Դեռևս խոսել չկարողացող երեխաների մայրենի լեզուն որոշվել է ծնողների կողմից:

Խուլերի և համրերի մայրենի լեզուն համարվել է այն լեզուն, որով նրանք կարդում և գրում են, կամ որով նրանք ավելի շատ են շփվում այլ անձանց հետ:

Երկրորդ լեզու համարվել է այն լեզուն, որին, ըստ հարցվողի, ազատ տիրապետել է (տվյալ լեզվով կարդալ, գրել և ազատ խոսել կամ միայն ազատ խոսել) նա: